

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե. - Ժ. ԴԱՐ

Մ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Դ

Այս աշխատությունը բաժանում է երկու մասի: Առաջինում խոսում է Հայկական երաժշտության և Հայկական խաղաղության մասին ընդհանրապես, երկրորդում՝ Հայ մեծ երաժիշտ վարդապետների կենսագրությունների, գործունեության և ստեղծագործությունների մասին: Վերջումս էլ են մի շարք կարևոր տեղեկագրություններ:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԱՐԿ ԸՍՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՋԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայկական երաժշտությունը մարդկության երաժշտական այն հնագույն մշակույթներից է, որոնք ցարդ պահպանել են իրենց ազգային ինքնությունը ու կենսական ուժը: Հայ ժողովրդի երաժշտության զարգացման ժամանակաշրջանը հաղորդակցելով է չափում: Նա ապրել է մոտ քսանհինգ դար:

Հայ քրիստոնեական եկեղեցու երաժշտությունը հիմնականում հաստատու է ամրապնդույնի Գրեթե Գրեթե ամբողջապես յետոյ, երբ բազմաթիվ կրօնական բաժանաժողովներում զրգեր թարգմանություններ են հայտնվել, և Հայերեն լեզուով գրություններ բազմաթիվ երգեր և շարականներ: Առաջին շարականագիրներն են Ս. Սահակ Կաթողիկոս և Ս. Մեսրոպ Մաշտոց: Առաջինին է վերագրում «Հայկապարուն և զկարգն Ասազ Շարաթուն», իսկ Ս. Մեսրոպին՝ «Հայկապարուն» խաչերի կրտսեր հիմք է դրում ոչ միայն դպրության, Հայ գրականության, այլև՝ Հայ եկեղեցական երաժշտության: Այս ժամանակից սկսեալ Հայկական եկեղեցիներում ժամերգությունները կատարում են Հայերեն լեզուով: Ուրեմն, եկեղեցական երաժշտություն էլ մերազատում է յոյն կամ առորի օտար ազդեցություններից և դառնում իր ինքնուրույն զարգացման ուղին: Ղազար Փարպեցին ակնարկում է թէ տալանի այդ հին շրջանում երգում էին

«Մուրը Աստուած»ը: Այս փաստն եւս ապացուցում է թէ արդէն Ե. Դարից սկսած մեր ժամերգություններն ու երգերը օտար ազդեցություններից մերազատուելով՝ կատարում էին Հայերեն լեզուով:

Այս հարցի վրայ աւելի ենք ծանրանում, որովհետեւ առանց Գրեթե Գրեթե հնարաւոր չէր լինէր Աւետարանը թարգմանել, Հայերեն լեզուով կատարել եկեղեցական արարողությունները՝ որոնց զգալի մասը բաղկանում է երգերից և շարականներից, ուստի և երաժշտությունից: Այս տեսանկյունից ելելով, մեր հոգեւոր երաժշտության հիմնադիրն ալեք է նկատենք Ս. Մեսրոպ Մաշտոցին, որովհետեւ նա է եղել մեր գրեթե ամբողջական մեր առաջին երաժիշտ վարդապետը (քանի որ մեր հոգեւոր երաժշտությունը ընդհանուր կապում է բառերի իմաստի հետ. առանց բառերի՝ եղանակներն էլ չէին լինի, և դրանց ստեղծողը Ս. Մեսրոպ Մաշտոցն է):

Ե, Դարում, մեր հոգեւոր երաժշտությունից առաջ, կար աշխարհիկ ժողովրդական երաժշտություն մը՝ որը առաջ և կենդանի էր ժողովրդի բերանում և մեհեմետներում: Սրա ամենամեծ տարածողներն ու պաշտպանները գուհաններն էին, մի խօսքով՝ աշխարհիկ երաժիշտները: Նոյնիսկ քրիստոնեական շրջանում երկար ժամանակ ունեցել ենք ոչ-հոգեւոր աշխարհիկ երաժիշտներ (թուրք լատ. սուլա), որոնք իրենց քաղցրալուր մեղեդիներով հարստացրել են մեր երաժշտության գանձարանը: Յայտնի է որ Ը. Դարում Ստեփանոս Սիւնեցու քոյրը՝ Սահակադուխտը, բազմաթիւ

երգեր է յօրինել և նրանց նշանաւոր տարածողներէրէ մէկն է Ֆիլիպ, որի մօտ Ք. Կաշխարհիկ և Հոգեւորական կու գային աշակերտելու և սորվելու նոր եղանակները» (1)։ Նա, դարի սովորութեան համաձայն, սովորեցնում էր վարագործի ետեւից։ միայն ձայնն էր լուում, իսկ ինքը թաքնուած էր վարագործի ետեւ։ «վասն պարկեշտութեան»։

Աշխարհիկ երաժիշտներէ մէջ նշանաւոր է նաեւ Վահան Գողթնեցին, որը եղել է Մ. երաժիշտ, Լ. Բանաստեղծ և որը բաժնի միայն գողտրիկ երգեր է երգել։ Նա, ինչպէս պատմութիւնից յայտնի է, արաքներէջ թաքնուելով վերագառնում է հայրենիք։ Նշանաւոր և տաղանդաւոր երաժիշտ է եղել նաեւ Գողթնեցու քոյրը՝ Սոսորվազուխանը, որը մեր հոգեւոր երաժշտութեան մէջ մշտնութեամբ է իր եղբոր միայն դրած գովերգութեամբ (զուգէ նա գրել է դրամաթիւ երգեր թէ՛ աշխարհիկ և թէ՛ կրօնական բովանդակութեամբ, բայց դժբախտաբար մեզ չեն հասել)։ Այս գովերգութիւնը կամ «Գողթնեցու երգերը» է մեր եկեղեցում Վահան Գողթնեցու տօնի ժամանակ։

«Ձարմամայի է իմն քան ըզբզս

Երաժշտականաց ձայն, աղբաց քոց

Հընքնուեմք, ով երաժիշտ Տէր ըվառնամ՝
Ընտրեալ յԱստուծոյ»։ (2)

Ե. Դարում մեր աշխարհիկ երաժիշտներէ Կ. երաժշտութեան առկայ լինելու մասին շատ թանկագին տեղեկութիւն կայ մեր սրտիս հօր՝ Մ. Սորենացու «Հայոց Պատմութիւն» գրքում։

«Ձուս պահեսցին խորժելով իմն (հեթանոսական սօղոմիսական երգերը) որպէս լուծ, մարդիկ կողմանն պինաւտ դաւառին Գողթնեցու, զոր երգելով ունանց բաժնաւոր՝ զոր լուսաբ իսկ ականջօք մերովք»։

Երկնէք երկին,

Երկնէք երկին»։

Պէտք է ենթադրել որ այդ ժամանակում հեթանոսական շրջանից մնացած բազմաթիւ երգեր էին երգուում Գողթնեցու երգչիների բերանով։ Սակայն դժբախտաբար Սորենացու

ցին միայն մի քանիսն է յիշատակել իր «Հայոց Պատմութիւն»-ում։ Այս կարճ բայց շատ թանկագին տեղեկութիւնները ցոյց են տալիս թէ մեր Գողթնեցու երգչիները (զուսանները) ունէին բարձր ճաշակ, նրանք հին, աւանդական երգերը խնամքով պահպանում էին և բաժնուով ու քնարով երգում տօնական օրերին, խնձորքների ժամանակ, ինչպէս Սորենացուն իր ակննով իսկ լսել է։ Սորենացու մօտ ոչ մի ակնարկութիւն չկայ հեղանակների մասին։ մենք էլ այժմ չգիտենք թէ ի՞նչ եղանակով էին երգում այդ գողտրիկ երգերը, սակայն թուում է որ Գողթնեցու երգչիների ճաշակն էլ իրենց դեռ նախա դարձերի համեմատ ու հոտն է ունեցել։

Հնում, ոչ միայն գուսանները կամ Գողթնեցու երգչիները նուազարաններով են կատարելիս եղել իրենց երգերը, այլ վանականներն էլ առաջերը և օղորտները նուազարաններով են կատարելիս եղել։ Յ. Օճնեցու այն վկայութիւնը, թէ «... և պարս է ուսումնասիրաց և խոնականագունիցն՝ նուազարանօք քնահարու լինել երաժշտական հոգեւոր»։ այլ և դրոշմ Գոյաքիցուն հնչեցուցանել ձայնից տեսակաւ» (1), ցոյց է տալիս որ հնում վանականները կատարում էին լինում վանքերում։ Բայց պէտք է ենթադրել որ այս տեղի էր ունենում միայն վանականների խցերում, երեկոները կամ արշալոյսին սաղմոսների քաղելու ընթացքին, և ոչ թէ փեղեցում՝ ժամերգութիւնների ժամանակ։

Մինչև Գրեքի Գիւտը ունէինք աւանդական գրականութիւն և աւանդական երաժիշտութիւն, որոնք կատարուում էին վիպասանների և Գողթնեցու երգչիների կողմից։ Սակայն Գրեքի Գիւտից անմիջապէս յետոյ, երբ գրի առնուեցին վանական առաջադեհներ, հպոստեր և ժողովրդական պատմութեան, պէտք է ենթադրել որ նոյն աշխատանքը տարուեց նաեւ երաժշտութեան քննադատում, սակայն վերջին դէպքում այդ աշխատանքը միայն կրօնական բնոյթ ունէր, որովհետեւ քրիստոնէութիւնը հակառակ էր այն ամենին՝ ինչ որ հեթանոսական էր և

(1) Գ. Վեռնիկ, Ալեքան, «Յուշիկի Հայրենեաց Հայաց»։

(2) «Հայրենալ շարական», Վաղարշապատ, 1888։

(1) «Յովհաննէս Իմաստասերի Ամենեղեց Մասնագրութիւն», Վենետիկ, 1958, էջ 81։

Ե.—Է. Դարերում, եկեղեցում արարողությունների ընթացքում գործածուող Աւետարանների վրայ նշմարում են առողջանութեան զանազան նշաններ և խաղեր, որոնք փաստում են թէ արդէն այդ ժամանակից սկսեալ Աւետարանը կարգացում էր ծախով (ռասթրաթիւ)։ Միեւնոյն էր պարզանք, թերեւս աւելի շնչուում, երգերի ու շարականների համար էլ։ Երբ Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը գրում էին Աւագ Ծառաթուայ և Ապաշխարութեան շարականները, աշակերտներին եղանակներով սովորեցնելու համար անհրաժեշտ էին զանազան նշաններ ու խաղեր՝ եղանակի կարեւոր և էական դարձուածքները չմոռանալու համար։ Ուստի, հենց այս անհրաժեշտութիւնից էլ բխում է զանազան նշանների դրածութիւնը։ Սկիզբում օգտագործւում են քերականութեան պատրաստի առողջանութեան (շխառաբանութեան) նշանները. հետագայում, առողջանութեան նշանները դարգանալով ծնունդ են տալիս խաղերին, որոնք աւելի կատարեալ են քան առողջանութեան նշանները։ Հետեւաբար, Հայկական խաղադրութեան հիմքը մեր քերականութեան մէջ գտնուող առողջանութեան նշաններն են եղել. օրինակ, բութը ('), շնչը ('), պարոյիը (") ծայրաստիճանների համար, իսկ երկայնն (') ու սուլը (օ) անհատութեան համար են օգտագործուել։

Առողջանութեան նշանների մասին մեր պատմագրութեան մէջ ամենահին տեղեկութիւնները գտնում ենք Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ում, ուր Ս. Սահակ Պարթեւի համար գրում է.

«Սահակայ, որ յոյժ առյցեալ անցուցանէր վարժիւք զբաղում գիտնութիւն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն և հռետորական յորգասաց յարանարեութեան, եւս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր»։ Նոյնպիսի արտայայտութիւն ունի նաեւ Արիստակէս Գրիշ.

«Մթանէի վարժեալքն հայոց երիցս երանեալ՝ մեծն Թարգմանիչը, զոր երկատիրաբար երկաւք ջանացեալք և յայլսեռն ազգաց հեռակոյց զԱստուածաշունչն կտակս յորջորեալ, զԱթենական նահանգսն վարժեալք. և պերճեմքական գծից հմասցեալք և

բարունաբար Աստուածային տառիւքս անդրադարձութեամբ զմեզ լուսաւորեալս»։ (1)

Սակայն մեզ յայտնի է՞ թէ իրենցից ի՞նչ են ներկայացրել «երգողական տառեր»ը և «պերճեմքական գծեր»ը, որովհետեւ ծայր «երգողական տառեր»ով և «պերճեմքական դժեր»ով գրուած ոչ մի աշխատութիւն չի հասել մեզ։ Բայց պէտք է նշանակել թէ ակնարկութիւնները հաւանաբար առողջանութեան նշաններին են վերաբերում։ «Աւետմնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հայկական առողջանութեան սխառեմն իր հիմնական դժերով նման է յունական առողջանութեանը, կամ հայկական քերականութիւններում յունաբան հայ քերականների մեկնութիւններում նկարագրուած բայց զործնականում չլիրատուած սխառեմն։ Այսպիսով, հայկական առողջանութիւնը ոչ յունականի ընդօրինակութիւնն է, ոչ էլ նրա վերամշակումը, իսկ այն հանգամանքը, թէ հայկական սխառեմն մէջ մուտք են գործել յունական մի քանի նշանների մեւերն ու անունները (այդ նշանների գիւտը վերագրւում է յոյն Արիստոֆան Բիւզանդացուն, 2-րդ դար մեր թուականութիւնից առաջ) էական նշանակութիւն չի կարող ունենալ։ Այս բոլորը հիմք են տալիս վերջնականապէս համոզուելու այն բանում, որ հայկական առողջանութեան խաղերի սխառեմն յունական ծագման կամ այդ խաղերի յունական էութեան մասին թէզը միանգամայն սխալ է. ուստի անհրաժեշտ է դրա վրայ կառուցուած հայկական երաժշտական խաղերի յունական ծագման թէզը»։ (2)

Որպէս ինքնուրոյն սխառեմ, առողջանութեան նշանները կիրառութեան մէջ են մտել Է.—Ը. Դարերում։ Առողջանութեան խաղերի սխառեմ թիւ.—թիւ. Դարերում հասել է իր զարգացման դալաթնակէտին և յայնորէն կիրառուել, մանաւանդ վանքերում։

ՁՈՀՐԱՊ ՄՐԿ. ՇԱՄԼԵԱՆ

ԴՇարումակիլի՝ 1)

(1) Ռ. Արայեան, «Հայկական խաղային և տագրութիւն», Երեւան, 1959:

(2) Նոյն տեղ: